

Ա Ր Գ Ա Բ Ի Լ

Արդարեւ Տիւրքիային Պարսկաստանի վաճառաչաճ քաղաքներից մին է. գտնուում է Կասպից ծովից դէպի հարաւ արեւմուտք և տարածուում է Սաւալան լեռների հարաւ արեւելեան կողմում, Բալլիկու կոչուած գետակի ձախ ափին: Ամբողջ բնակիչների թիւը 20000-ից անցնում է, որոնցից շատ քչերն են հայ, իսկ մնացածները՝ թուրք: Հայերն այժմ հազիւ լինին ընդամէնը 25—30 տուն: Եղել է սակայն ժամանակ, ուր հայ աղքատակութիւնն այստեղ տիրող տարրերից մին է եղել: Դեռ մինչև այժմ էլ քաղաքի կենտրոնում, Շէյխ կոչուած մի հինաւուրց մզկիթի բակում և բակից դուրս՝ մզկիթի առաջ, գտնուում են մի շարք գերեզմանաքարեր, որոնց վրայ կարդում ենք «աստ հանդչի» և կամ տեսնում ենք քանդակուած խաչեր, Բացի դրանից մզկիթն ունի մի առանձին մաս, որ խաչաձև է և կարծել է տալիս, որ եղել է երբեմն քրիստոնէական եկեղեցի: Կարկատանները, որ արել են այդ եկեղեցին մզկիթի վերածելու համար՝ բոլորովին աչքի են ընկնում: Եւ զարմանալի բան. մզկիթի այդ մասը, որ, ինչպէս ասացինք, խաչաձև է, ծառայում է այժմ որպէս պահարան զանազան հին անօթեղէնների ու ձեռագրների: Վերջիններս առանձին պահարաններում լինելով՝ չենք կարողացել տեսնել: Տեղացի հայերից լսել ենք, որ այդ ձեռագրերում կան հայերէն գրութիւններ ևս: Հոգևոր պաշտամունքը կատարուում է մզկիթի միւս մասերում, որոնք առաջինի հետ հաղորդակցութիւն ունին պատի մէջ բացուած մի դռնակով միայն: Այս բոլորից դալիս ենք այն եզրակացութեան, որ պարսիկ մահմեդականներն այդ եկեղեցին իրանց մզկիթին կցելուց յետոյ էլ դեռ պիղծ են համարում և այնտեղ ոչ մի պաշտամունք չեն կատարում:

Արդարեւիւ անցեալը պատմութեան մէջ ընդարձակ յիշատակութիւն չի դառել, գոնէ մեր պատմութեան մէջ ո՛չ մի տեղ չի յիշուած: Բայցի վերոյիշեալ տաճարից, որ փոխուած է մզկիթի, այն հինաւուրց գերեզմանաքարերից, որոնք այս ու այն կողմ՝ ցրուած են այդ տաճարի շուրջը, մեր դրաւոր յիշատակարաններում պահուած կայ երկու վկայաբանութիւն, որ ցոյց են տալիս, թէ այդ քաղաքն ունեցել է երբեմն շփումն քրիստոնեաների հետ: Այդ վկայաբանութիւնները գանուում են մեր ձեռագիր և սպուած յայսմաւուրքներում: առաջինը պատմում է պարսիկ սին Աբրահամ եպիսկոպոսի մահը, երկրորդը Անանիա անուն պարսկի Աւելորդ շենք համարում երկուսն էլ թարգմանաբար դնել այստեղ:

Ա. «Պարսից Աբրահամ եպիսկոպոսի վկայաբանութիւնը. Սա ազգով պարսիկ էր Արտաւիլ քաղաքից և եպիսկոպոս ձեռնադրուած մեր սուրբ Գրիգոր Լուսաւորչից. այդ պատճառով էլ համարձակ քարոզում էր Քրիստոսի կրօնը և շատերին կոտապշտութիւնից դարձնում էր ճշմարիտ աստուածապաշտ: Սրա համար անհաւատները բարկանալով՝ բռնեցին նրան, տարան ներկայացրին մոզպետին և ստիպեցին Քրիստոսին ուրանալ և զոհ մատուցանել արևին ու կրակին: Իսկ նա բաց անելով իր շնորհալից բերանը՝ երկար խօսեց Աստուածային գրքից և յանդիմանեց նրանց անաստուած մոլորութիւնը, անիծեց ու անարգեց Պարսից Սաբիւսոս (Շապուհ) թագաւորին և Ադէլփարաս մոզպետին: Եւ գեռ ամենասուրբ Երրորդութեան խոստովանութիւնը չվերջացրած՝ գլխատեցին սուրբ Աբրահամ եպիսկոպոսին, ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ»:

Բ. «Այսօրուայ օրս՝ Քրիստոսի սուրբ վկան Անանիա պարսիկը մտաւ Արտաւիլ քաղաքը, յանդիմանեց արևի ու կրակի պաշտօնեաներին և Աստուած դաւանեց Քրիստոսին: Քաղաքացիք բռնեցին նրան և այնպէս դանակիծեցին, որ շատերին թուում էր թէ մեռաւ: Եւ մեռած կարծելով՝ քաջեցին նրան դուրս. բայց թիչ յետոյ

նա բաց արաւ բերանը և դոչեց բարձրաձայն. Ոտքի ելէք Աստուծուն աղօթելու. ահա մի սանդուխ եմ տեսնում, որի ծայրն հասնում է մինչև երկինք, և հրեղէններ՝ որ ելնում են վեր և ասում ինձ. Արի մեզ հետ և քեզ հանենք լուսալի քաղաքը: Այս ասելով ուրախութեամբ հոգին աւանդեց Աստուծուն:

Այժմու Արդարելի հայերը մեծ մասամբ դաղթել են Թաւրիղից, մասամբ էլ Թաւրիղի մօտ գտնուած Մուժամբար գիւղից, անցեալ դարու վերջին կիսից յետոյ: Թէպէտ իւրաքանչիւր ընտանիք այնքան էլ հարուստ չէ, բայց համեմատած Պարսկաստանի միւս քաղաքների հետ՝ սրանք աւելի բարեկեցիկ, աւելի անգորր և ապահով են: Մէկ երկուսն հազիւ արհեստաւոր լինին, մնացած մեծամասնութիւնը ներկայացուցիչներ են զանազան առևտրական տներու հակառակ իրանց սակաւութեան, կարողացել են պահել իրանց գիրքը տեղացի պարսիկ ազգաբնակչութեան մօտ: Շնորհիւ այն հանգամանքի, որ վերջերս ամբողջ քսան տարուայ ընթացքում, մինչև 1900 թ.ը, Ռուսաց վաճառականապետն եղել է հանդուցեալ Խաչատուր Շահբաղեանի նման մի պատկառելի, բառի բուն իմաստով վարչական անձնաւորութիւն, որի պաշտօնավարութեան ընթացքում, ինչպէս պատմում է մեծ թէ փոքր՝ իւրաքանչիւր տեղացի հայ կամ թուրք, ոչ ոք դժգոհ չի մնացել, այլ ամբողջ Արդարելին հաւասարապէս վայելել է նրա խաղաղասիրութեան և ճշմարիտ բարեպաշտութեան պտուղները, մինչև օրս էլ թուրքն յարգանքով է արտասանում հայ անունը և ակնածութեամբ ցոյց տալիս հանդուցեալի տան դուռը:

Հայ հասարակութիւնը Խաչատուր Շահբաղեանի ջանքերի շնորհիւ ունեցել է եկեղեցի և դպրոց, որոնք թէ և փոքր և անշուք, բայց մինչև այսօր պահում են իրանց գոյութիւնը: Ի պատիւ Արդարելցի հայերի պէտք է ասել, որ ինչքան էլ թիւր լինի իրանց ըմբռնումը ուսման, կրթութեան եղանակի մասին, — որովհետև դպրոցը կառավարուում է դեռ աւելի խալիֆայական եղանակով քան

Նորագոյն մանկավարժական սկզբունքներով, — այնուամենայնիւ հասկացել են կրթութեան նշանակութիւնը և հաւաքական ուժով պահում են և՛ եկեղեցի և՛ դպրոց, երբեմն նաև ներկայացումներ են ունենում. առանձին ուժիկ են տալիս քահանայի, վարժապետի, սափրիչի և բաղնեպանի, Այս բոլորի վրայ աւելացնենք և իրանց հիւրասիրութիւնը, որին եթէ զուգընթաց չլինէր իրանց քմասէր, քիչ էլ եսապաշտ բնաւորութիւնը, գովեստ միայն պիտի կարգայինք իրանց անուան, մինչ այժմ նսեմացած ենք տեսնում նրանց բոլոր արժանիքներն այդ ախտի պատճառով, որ ցոյց են տալիս ամէն մի հասարակական խնդրում:

Դպրոց յաճախող մանուկների մեծամասնութիւնը աղջիկ է. և առհասարակ աղջիկներն այստեղ շատ աւելի են տղաներից, որովհետև Արդաբիլցի հայ երիտասարդն, երբ ուզում է ամուսնանալ, գնում է թաւրիզ և այնտեղից է գանում իր համար հարսնացու:

Քանի գեռ ուսական երկաթուղին թաւրիզ չի հասել, Արդաբիլի հայերը կը մնան իրանց տեղում. բայց մի քանի տարի յետոյ, երբ հաղորդակցութեան ճանապարհները փոխուին, հաւանօրէն Արդաբիլցիք էլ հետզհետէ կը գաղթեն թաւրիզ, որովհետև նրանց այդ քաղաքի հետ կապողը այն հանգամանքն է, որ Արդաբիլը գանուում է թաւրիզից Բաքու տանող ճանապարհի վերայ և իրանք միշտ հաղորդակցութեան մէջ են այդ երկու քաղաքների հետ: Այդ հաղորդակցութեան յարատեւութիւնից է կախուած իրանց գործերի յաջողութիւնը, որին զոհ են բերում ազգականների կարօտ, զաւակների կրթութիւն, և հեռու իրանց արիւնակիցներից, որոնք գանուում են մեծ մասամբ թաւրիզում, վարում են գրեթէ պանդխտի կեանք:

Մ. ա.

